ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Նշվածներից ո՞րն է բնահասարակական աշխարհահամակարգ։**

1) անապատը
2) սառցադաշտը
3) քաղաքը
4) ջրամբարը

2 **Հյուսիսային կիսագնդի ձյունապատ լեռների ո՞ր լանջերի ձյունն է ամենաարագը հալչում։**

1) հյուսիսային
2) հյուսիսարևելյան
3) հարավային
4) հյուսիսարևմտյան

3 **Քանի՞ աստիճան է հորիզոնի հարավարևմտյան կողմի ազիմուտը։**

1) 270˚
2) 225˚
3) 210˚
4) 185˚

4 **Քարտեզում 2 կետերի հեռավորությունը 10 սմ է, իսկ իրականում՝ 9 կմ։ Որքա՞ն է այդ քարտեզի մասշտաբը։**

1) 1 : 90 000
2) 1 : 900 000
3) 1 : 9000 000
4) 1 : 90 000 000

5 **Նշվածներից ո՞րն է տեղեկույթի էմպիրիկ և տեսական ընդհանրացման մեթոդ։**

1) նկարագրականը
2) շրջանացումը
3) վիճակագրականը
4) դաշտայինը

6 **Նշվածներից ո՞րը երկրագնդի օրական պտույտի հետևանք *չէ։***

1) տարվա եղանակների առաջացումը
2) գիշերվա ու ցերեկվա հերթափոխը
3) ժամային գոտիների առաջացումը
4) Կորիոլիսի ուժի առաջացումը

7 Ի՞նչ է պատկերված նկար 1-ում:

1) ջրհոր
2) գեյզեր
3) ջրվեժ
4) հրաբուխ

Նկար1

8 Նշվածներից ո՞րն է հրային ապար:

1) մարմարը
2) կրաքարը
3) բազալտը
4) կավիճը

9 Մթնոլորտի ձևավորման պահին ո՞ր գազի քանակն է գերազանցել 90%-ը:

1) ածխաթթու գազ
2) թթվածին
3) ծծմբական գազ
4) ջրածին

10 Նկար 2-ում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում:

1) 1
2) 2
3) 3
4) 4



Նկար 2

11 Ո՞ր ջերմաստիճանի ջրերն են ամենախիտը:

1) +1˚C
2) +2˚C
3) +3˚C
4) +4˚C

12 Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 6 մ² է, արագությունը՝ 6 մ/վ: Որքա՞ն կլինի գետի ծախսը:

1) 12 մ³/վ
2) 70 մ³/վ
3) 24 մ³/վ
4) 36 մ³/վ

13 Ո՞ր դարաշրջանում է մասնատվել Պանգեյա մայրցամաքը:

1) Մեզոզոյան
2) Արխեյան
3) Կայնոզոյան
4) Պալեոզոյան

14 Մթնոլորտային տեղումներից ո՞րն է հանկարծակի թափվում սառցաբյուրեղների տեսքով Երկրի մակերևույթ և երբեմն առաջացնում ավերածություններ:

1) անձրև
2) ձյուն
3) կարկուտ
4) ցող

15 Նկար 3 - ում ո՞ր տառով է պատկերված մշտադալար կոշտատերև անտառների զոնան:

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ



նկար 3

16 **Ի՞նչն է բնորոշ տայգայի բնական զոնային:**

1) հողի բազմամյա սառածության գերակշռությունը
2) պոդզոլային հողերի գերակշռությունը
3) ծառային բուսականության բացակայությունը
4) կապիկների և կոկորդիլոսների տարածումը

17 **Քարտեզ 1-ում Է տառով ո՞ր թերակղզին է նշված.**

1) Առնհեմլենդի
2) Քեյփ Յորքի
3) Սոմալիի
4) Մալակկայի

18 **Քարտեզ 1-ում Գ տառով ո՞ր նեղուցն է նշված.**

1) Բասսի
2) Թորեսի
3) Կուկի
4) Դրեյկի



Քարտեզ 1

19 **Ո՞ր ծովն է գտնվում Եվրասիայի հարավում։**

1) Արաբական
2) Ճապոնական
3) Նորվեգական
4) Լապտևների

20 **Ո՞ր մայրցամաքում է աճում վելվիչի բույսը։**

1) Աֆրիկա
2) Հյուսիսային Ամերիկա
3) Անտարկտիդա
4) Հարավային Ամերիկա

21 **Նշված ծովային հոսանքներից ո՞րն է սառը։**

1) Անտիլյանը
2) Գոլֆստրիմը
3) Ալյասկայինը
4) Կալիֆոռնիականը

22 **Նշվածներից ո՞րն է աճում Հարավային Ամերիկայում։**

1) Էվկալիպտ
2) հսկա սեքվոյա
3) ժենշեն
4) բրազիլական հևեյա

23 **Ո՞ր բնական զոնան է տարածվում Հյուսիսային Ամերիկայում.**

1) պամպա
2) կամպոս
3) պրերիա
4) սելվաս

24 **Ո՞ր լիճն է գտնվում Հարավային Ամերիկայում։**

1) Վերին
2) Նյասա
3) Բայկալ
4) Պոոպո

25 **Ովքե՞ր են առաջինը հայտնաբերել Անտարկտիդան։**

1) շվեդները
2) անգլիացիները
3) ամերիկացիները
4) ռուսները

26 **Ո՞ր կղզին է տարածքով ամենամեծը։**

1) Կալիմանտան
2) Սումատրա
3) Սուլավեսի
4) Գրենլանդիա

27 **Ո՞ր հանրապետությունն է նախագահական։**

1) Իտալիա
2) Հնդկաստան
3) Գերմանիա
4) Ռուսաստան

28 **Ո՞ր երկիրն ունի ավելի քան 200 մլն բնակիչ։**

1) Ինդոնեզիան
2) Ճապոնիան
3) Ղազախստանը
4) Ռուսաստանը

29 **Ո՞ր երկիրը ելք ունի դեպի Կարմիր ծով։**

1) Իրանը
2) Սիրիան
3) Լիբանանը
4) Եգիպտոսը

30 **Զարգացած հետարդյունաբերական երկրներ են.**

1) Նորվեգիան և Գերմանիան
2) Հնդկաստանը և Չինաստանը
3) Արգենտինան և Մեքսիկան
4) Քուվեյթը և Վենեսուելան

31 Երկրի տարածքը կազմում է 30 000 կմ², բնակչության թիվը՝ 9 մլն մարդ: Որքա՞ն կլինի բնակչության միջին խտությունը:

1) 350 մարդ/ կմ²
2) 130 մարդ/ կմ²
3) 300 մարդ/ կմ²
4) 420 մարդ/ կմ²

32 Նշվածներից ո՞րն է միգրացիայի ձև:

1) տնտեսականը
2) հարկադիր
3) քաղաքականը
4) ազգայինը

33 Նշվածներից ո՞ր երկիրն է առաջինն աշխարհում անգրագետների բացարձակ թվով:

1) Ռուսաստանը
2) Հնդկաստանը
3) Պակիստանը
4) Չինաստանը

34 Ո՞ր երկրներն են գտնվում զարգացման արդյունաբերական փուլում:

1) Զամբիան և Եթովպիան
2) Ֆրանսիան և Իտալիան
3) Մոզամբիկը և Բանգլադեշը
4) Բրազիլիան և Արգենտինան

35 Ո՞ր երկրներն են աշխարհում առաջատար ածխի պաշարներով:

1) Ֆինլանդիան ու Ֆրանսիան
2) Նիդեռլանդները և Լյուքսեմբուրգը
3) Չինաստանը և Ռուսաստանը
4) Նոր Զելանդիան և Տաջիկստանը

36 Ո՞ր երկիրն է աշխարհում առաջատար բրնձի մշակությամբ:

1) Ռուսաստանը
2) Բրազիլիան
3) Կանադան
4) Չինաստանը

37 **Տրված պետություններից ո՞րն ունի ցամաքային սահման Իրանի հետ։**

1) Սաուդյան Արաբիա
2) Հայաստան
3) Բահրեյն
4) ԱՄԷ

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը։**

1. Ավստրիա	ա. Ամստերդամ
2. Դանիա	բ. Կոպենհագեն
3. Նիդեռլանդներ	գ. Փարիզ
4. Ֆրանսիա	դ. Վիեննա

1) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
3) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

39 **Ո՞ր երկիրն ունի ելք դեպի Մեքսիկական ծոց։**

1) Իրաքը
2) ԱՄԷ
3) Նորվեգիան
4) ԱՄՆ

40 **Ո՞ր պետությունն է գտնվում Արևելյան Ասիայում։**

1) Պակիստան
2) Ղազախստան
3) Լիբանան
4) Ճապոնիա

41 **Զույգերով տրված պետություններից որո՞նք են անկլավ։**

1) Եգիպտոսը և Թունիսը
2) Սվազիլենդը և Լեսոտոն
3) Ալժիր և Նիգերիա
4) Մարոկկո և Եթովպիա

42 **Ինդոնեզիային պատկանող կղզի է.**

1) Կալիմանտանը
2) Հոնսյուն
3) Թասմանիան
4) Սիցիլիան

43 Ո՞ր տարածաշրջանին են առավելապես բնորոշ բիդոնվիլները։

1) Լատինական Ամերիկային
2) Արևմտյան Եվրոպային
3) Ավստրալիան և Օվկիանիային
4) Հյուսիսային Ամերիկային



Քարտեզ 2

44 Քարտեզ 2–ում ո՞ր տառով է նշված Քաջարան քաղաքը։

1) Զ
2) Է
3) Ե
4) Ը

45 Քարտեզ 2–ում ո՞ր տառով է նշված Ծաղկունյաց լեռնաշղթան։

1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

46 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Արևելքում է գտնվում Անատոլական սարահարթը:
2) Հյուսիսում է գտնվում Իրանական բարձրավանդակը:
3) Հարավից եզրավորում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան
4) Արևմուտքից եզրավորում են Փոքր Կովկասի ծալքաբեկորավոր լեռները:

47 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ամենաշատ տեղումները թափվում են Եղեգիսի հովտում:
2) Հստակ արտահայտված է արևմուտքից արևելք փոփոխվող լայնակի կլիմայական գոտիականությունը:
3) Կլիմայաստեղծ գործոններից են պասսատները:
4) Միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն:

48 **Հայաստանում տնտեսության ո՞ր ճյուղերին է բաժին ընկնում արտահանվող արտադրանքի գերակշիռ մասը:**

1) շվեյցարական պանրագործությանը և մեղրի արտադրությանը
2) սև մետաղաձուլությանը և կաշվի-կոշիկի արտադրությանը
3) գորգագործությանը և կաուչուկի արտադրությանը
4) գունավոր մետալուրգիային և գինու-կոնյակի արտադրությանը

49 **Մեծամորի ատոմակայանի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Միակ ատոմակայանն է հարավկովկասյան տարածաշրջանում:
2) Աշխատում է ներկրվող միջուկային վառելիքով:
3) ՀՀ ամենահզոր էլէկտրակայանն է:
4) Արմավիրի մարզում է:

50 **Զույգերով տրվածներից որո՞նք են նեֆելինային սիենիտի հանքավայրեր:**

1) Կապանը և Ալավերդին
2) Քաջարանը և Ագարակը
3) Շվանիձորը և Թեժ լեռը
4) Մեղրաձորը և Սոթքը

51 **Ջերմոցային էֆեկտի ուժեղացման պատճառներից է.**

1) մթնոլորտում ածխաթթու գազի և մեթանի ավելացումը
2) խոշոր քաղաքներում զբոսաշրջության զարգացումը
3) հանքային պարարտանյութերի օգտագործման չարաշահումը
4) շինարարության պաճառով փոշու արտանետումները

52 **«Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» զույգերից ընտրել ճիշտը։**

1) կենսաբանական ռեսուրս —- անսպառ
2) քամու էներգիա — սպառվող
3) արեգակնային էներգիա — անսպառ
4) հանքային ռեսուրս — անսպառ

53 **Տրվածներից ո՞րն է հողաբարելավման միջոցառում:**

1) քարամաքրումը
2) ջրամբարների կառուցումը
3) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
4) աերացիան

54 **Տրվածներից ո՞րն է ՄԱԿ-ի մասնագիտացված կազմակերություն՝ մշակութային հուշարձանների պահպանմամբ։**

1) ՅՈՒՆԵՍԿՕ
2) ՅՈՒՆԻՍԵՖ
3) ՅՈՒՆԵՊ
4) ՅՈՒՆԻԿՏԱԴ

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Թույլ զարգացած երկրների բնառեսուրսային ներուժը վիթխարի է, օգտագործման տեսանկյունից արդյունավետությունը՝ ցածր։
2) Թույլ զարգացած երկրներում զանգվածային անգրագիտությունը հետամնացության ցուցանիշներից է։
3) Թույլ զարգացած երկրների տնտեսության մեջ գերակշռողը գյուղատնտեսության բաժինն է։
4) Թույլ զարգացած երկրներում բնապահպանական հիմնախնդիրներ չկան։

56 Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել Աֆրիկայում հոսող գետերի անունները.

1) Ամազոն
2) Վոլգա
3) Միսուրի
4) Օրանժ
5) Կոնգո
6) Նիգեր
7) Մուրեյ
8) Նեղոս

57 Գրել այն լճերի համարները, որոնք գտնվում են Եվրասիայում.

1) Բալխաշ
2) Բայկալ
3) Օնտարիո
4) Տիտիկակա
5) Արալյան
6) Չադ
7) Վիկտորիա
8) Նյասա

58 Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական պայթյունը».

1) Կանադա
2) ԱՄՆ
3) Ուկրաինա
4) Զամբիա
5) Իտալիա
6) Սոմալի
7) Անգոլա
8) Եմեն

59 Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է մահմեդականությունը.

1) Հնդկաստան
2) Հարավային Կորեա
3) Չինաստան
4) Իրան
5) Պակիստան
6) Ալբանիա
7) Ֆրանսիա
8) Տաջիկստան

60 Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են թեյի մշակությամբ.

1) Ավստրալիա
2) Գերմանիա
3) Ճապոնիա
4) Իտալիա
5) Թուրքմենստան
6) Չինաստան
7) Հնդկաստան
8) Հունաստան

61 Գրել այն բնակավայրերի համարները, որոնք գտնվում են Սյունիքի մարզում.

1) Մարալիկ
2) Սիսիան
3) Վարդենիս
4) Վաղարշապատ
5) Ապարան
6) Քաջարան
7) Գորիս
8) Մարտունի

62 Տրված պետությունների համարները դասավորել դրանց տարածքի մեծության նվազման կարգով:

1) Ինդոնեզիա
2) Ռուսաստան
3) Կանադա
4) ԱՄՆ

63 ՀՀ տրված քաղաքների համարները դասավորել հյուսիսից հարավ ուղղությամբ.

1) Բերդ
2) Աշտարակ
3) Սևան

(64-65). Քաղաքի բնակչության թիվը 90 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 1100 մարդ: Եկածների թիվը 2500 մարդ է, մեկնածների թիվը՝ 1900 մարդ:

64 Որոշել միգրացիայի մնացորդը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

66 Երկրում հնդկացորենի ցանքատարածությունների մակերեսը 5 մլն հա է, համախառն բերքը՝ 35 մլն տ: Որքա՞ն է հնդկացորենի միջին բերքատվությունը (ցենտներով):

67 90 000 կՎտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար քանի՞ տոննա քարածուխ է հարկավոր (քարածխի ջերմային գործակիցը 1 է):

68 Օդի ջերմաստիճանը լեռան ստորոտում 0° է, իսկ գագաթին՝ -15°: Հաշվել լեռան հարաբերական բարձրությունը: Հաշվարկը կատարել 5°-ով:

69 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ *սխալ*.**

1) Բասենի դաշտը տարածվում է Ճորոխի վերին հոսանքի ավազանում։
2) Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերը։
3) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Մանազկերտի դաշտն է։
4) Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի ստորին հոսանքի ավազանում է։
5) Ալաշկերտի դաշտը Արևելյան Եփրատի հովտում է։
6) Քեբանի ջրամբարը կառուցված է Խարբերդի դաշտում։

70 **ՀՀ Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) ՀՀ միակ մարզն է, որը չունի արտաքին սահմաններ։
2) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները։
3) Շատ հարուստ է տուֆի հանքերով։
4) Ունի արտեզյան ավազան։
5) Արևելյան սահմանն անցնում է Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժան գծով։
6) Տիրապետողը լեռնատափաստանային լանդշաֆտներն են։